ո՞չ էլ ըստ պայմանի բավականաչափ կառքեր։ Ուղևորի կյանքը ամեն քայլափոխին ենթարկվում էր վտանգի։ Այնուամենայնիվ, այդ բոլոր թերություններով հանդերձ իրար շարունակությունը կազմող՝ Գորիս—Շուշի, Շուշի—Եվլախ խճուղիները նշանավոր չափով դյուրացնում էին և՛ Ղարաբաղի, և՛ Զանգեզուրի շուկաների կապը երկաթուղու միջոցով Ռուսաստանի արդյունաբերական շրջանների հետ։ Դա նպաստում էր մի կողմից՝ տեղական հումքի՝ բրդի, կաշվի, բուժոժի, գորգերի, Ղարաբաղից՝ նաև օղու, իսկ Զանգեզուրից՝ պղնձի արտահանությանը։ Դա նպաստում էր մյուս կողմից՝ Մոսկվայի, Վարշավայի և Ռուսաստանի այլ արդյունաբերական վայրերից գործարանային ապրանքների ներմուծմանը, որոնց մեջ մանուֆակտուրան և երկաթեղենը առանձին կարևորություն ունեին լայն սպառման համար։ Հաղորդակցության երկաթուղային այդ գծի վրա Շուշին ստացավ կենտրոնական պահեստավայրի նշանակություն, որտեղից և Զանգեզուրի միջնորդը վերցնում էր իր գավառի գյուղերում սպառվելիք բաժինը։ Այդ ապրանքները բաշխելով գյուղերում ոչ թե դրամի դիմաց, այլ տեղական հումքի հետ փոխանակելով և այդ հումքով հաշիվները փակելով Շուշու պահեստների հետ՝ միջնորդը կարողանում էր ավելի արագ աճեցնել իր ձեռքի տակ եղած դրամագլուխը։ Նրա կապիտալը անցնում էր իր զարգացման երկրորդ փուլը։ Առաջին փուլը այն ժամանակն էր, երբ դրամագլխի աճումը կատարվում էր վաշխառության միջոցով տոկոսների վերադրությամբ։ Այդ ձևն իր գիշատիչ բնույթով արդեն սկսել էր ծավալվել 80-ական թվականներից առաջ։

Խոշոր գերդաստանների քայքայումը առանձնապես նպաստավոր պայմաններ էր ստեղծում դրա համար։ Մանրացած ընտանեկան միավորները դրամի կարիքը զգում էին ավելի հաճախ և ավելի սուր, քան թե գերդաստանային կազմի մեջ եղած ժամանակ, մանավանդ որ պետական հարկերը և այլ տուրքերը վճարվում էին դրամով և տնտեսության համար անհրաժեշտ իրերն էլ ձեռք էին բերվում դրամական հատուցումով։ Մանր ընտանիքների համար դժվար կացություն էր ստեղծվում նաև այն պատճառով, որ գյուղական համայնքի բնական աճման հետևանքով նրանցից յուրաքանչյուրին գյուղի վարելահողից և խոտհարքից ավելի փոքր տարածություն էր բաժին ընկնում։

Հանգամանքները այնպես էին դասավորվում, որ նրանք ստիպված էին լինում ամենածանր պայմաններով դրամ փոխ առնել վաշխառուից։ 80-ական թվականներից սկսած, մանավանդ 90-ական թվականներին և այնուհետև՝ ժամանակակից պարբերական մամուլը հատուկ ուշադրություն էր բևեռում վաշխառուական երևույթների ծավալման վրա և արձանագրում էր բազմաթիվ ցայտուն փաստեր Անդրկովկասի հայաբնակ վայրերում, նաև Զանգեզուրում, վաշխառուական տոկոսների սանձարձակ բարձրացումը և գործադրած պրակտիկայի աճող դաժանությունը։ Ս. Զելինսկին[33] 1885 թ. Զանգեզուրի արքունի գյուղացիների տնտեսական կացությունը ուսումնասիրելիս՝ հայտնաբերել էր միայն պղնձահանքերի երեք կետերում չորս վաշխառուների առկայությունը՝ կոշկակարների, դարբինների, պղնձագործների, հացթուխների, մսագործների՝ դասաբների, սափրիչների, գդակ կարողների կողքին։ Բայց այդ արհեստավորներին հարևան բուն էին դրել բացի միայն վաշխառությամբ զբաղվողներից նաև այլ 35 ճոթեղեն, 10 մանր ապրանք, 6 պղնձե ամաններ ծա-

[33] Նշված աշխ., էջ 119։